



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«23» 10 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000086

Ձեռնարկող՝ «Արմենիան Ֆյուզր» ԲՀ
Ք. Երևան, Հյուսիսային պող. 1

Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Լուսագյուղ գյուղի գլխավոր
հափակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական
գնահարման հաշվելիվություն

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Դոնոյան



Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՀԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆԱՌՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 000086

<<23>> 10 2019թ.

Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Լուսագյուղ գյուղի գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝

«Արմենիան Ֆյուչը» ԲՀ

Ներկայացված նյութեր՝

- Հիմնադրութային (ծրագրային) փաստաթուղթ
- Շրջակա միջավայրի ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն,

Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Լուսագյուղի պարզեցված գլխավոր հատակագիծը մշակվել է «ԱՐՄԵՆԻԱ ՖՅՈՒՉՐ» ԲՀ պատվերով՝ «Լուսագյուղ գյուղի զարգացում» բարեգործական ծրագրի շրջանակներում:

Լուսագյուղի պարզեցված գլխավոր հատակագծի մշակման հիմնական նպատակը բնակավայրի հեռանկարային և տարածական զարգացման ուղղությունների ապահովումն է, սոցիալական և տնտեսական զարգացման սկզբունքային լուծումներով, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության, տնտեսական ներուժի օգտագործման, բնապահպանական համալիրի կիրառումով։ Ռազմավարական գնահատման հաշվետվության համար հիմք է ընդունվել գյուղական բնակավայրի առկա սոցիալ-տնտեսական վիճակի, խնդիրների, բնակչության զարգացվածության մակարդակի, նախադրյաների և լուծման ուղիների վերլուծությունը։

Լուսագյուղը գտնվում է Արագածոտնի մարզում՝ Ծաղկունյաց լեռների հարավային փեշին, Արագած լեռան արևելյան մասում Քասախ գետի հովտում։ Գտնվում է ծովի մակերեսույթից 1925-:-2015մ բարձրությունների վրա։ Գյուղը ներառված է Ապարան համայնքի կազմում, Ապարանից՝ 1.6 կմ, մարզկենտրոն Աշտարակից՝ 34 կմ հեռավորության վրա։

Գյուղի տարածքում և շրջակայրում կան հին բնակատեղիներ և դամբարանադաշտեր, կիսավեր վկայություններ, պատմական տարբեր ժամանակաշրջաններին վերաբերվող պատմամշակութային տարբեր հուշարձաններ։ Գյուղը կառուցապատված է տնամերձ հողամասերով, անհատական քարե տներով։ Ներկայումս գյուղի ճանապարհը ամֆալտապատ չէ, իսկ մնացած փողոցները գուրկ են կոշտ ծածկույթից։ Բնակչությունը հիմնավանական գրանցված է անասնապահությամբ և հողագործությամբ։ Բնակավայրում առկա են հանրակոթական դպրոց, մանկապարտեզ (ոչ բարվոք վիճակում), տուրբազայի շենք (շահմանական բարձրությամբ 20 մետր) և անական բարձրությամբ 10 մետր ըստ համակարգության շենք (շահմանական բարձրությամբ 15 մետր)։



վիճակում), բնակելի տներում տեղակայված մթերային խանութներ: Բնակավայրը գազիֆիկացված է:

Կլիման հիմնականում չորային է, համեմատաբար ցուրտ, խոնավ ձմեռով և չափավոր խոնավ, տաք ամառով: Գարունը մեղմ է և բարեխառն: Մթնոլորտային տարեկան միջին տեղումները կազմում են 400մմ: Հողի սառեցման առավելագույն խորությունը 108սմ է: Գերակշռում են 1.8 մ/վրկ արագության հյուսիսային (ամռանը) և արևմտյան (ձմռանը) ուղղության քամիները:

Լուսագյուղի ռելիեֆը բարձրադիր տեղանքներում ունի միջին բարձրության, ուռուցիկ լանջերով, գմբեթածև և մասնատված հովտաձորակային ցանցով լեռնազանգվածների տեսք, իսկ ավելի ցածրադիր տեղանքներում լեռնալանջերը չափավոր զարիթափ են: Առանձին տեղերում կան ապարների մերկացումներ, փլվածքային պրոցեսներ, չինգիլներ և սելավների առաջացրած ծորակներ: Տարածքին բնորոշ է լեռնատափառանային, լեռնաանտառային և լեռնամարգագետնային լանդշաֆտը: Լուսագյուղի վարչական տարածքի՝ 2000-2400մ բարձրությունների լեռնալանջերը անտառածածկ են:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին բնորոշ են հրաբխանստվածքային ապարները, պորֆիրիտները, ինչպես նաև բեկորային ժայռային և կիսաժայռային հրաբխային ապարների նստվածները: Ըստ կատարված ինժեներա-երկրաբանական հետազոտությունների գրունտային ջրերը գտնվում են 5մ և ավելի խորություններում: Համաձայն սեյսմիկ միկրոջրանցման քարտեզագրական տվյալների՝ Լուսագյուղի տարածքը գտնվում է հորիզոնական արագացումների՝ 0.206g – 0.272g տիրույթում:

Բնակավայրի օդի աղտոտվածության հիմնական աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը (20.687տ/տարի) և ջեռուցման միջոցները: Բնակավայրի օդային ավագանի աղտոտվածությունը գտնվում է բնակավայրերի համար սահմանված թույլատրելի նորմերի սահմաններում: Լուսագյուղ բնակավայրի սահմանագծից հարավ և հարավ արևմուտք տարածված են սևահողերը, լեռնալանջերի միջին բարձրություններում՝ անտառային դարչնագույն և Ծաղկունյաց լեռների գագաթնամերձ տարածքներում՝ մարգագետնատափառանային սևահողերը: Հողերի էրոզացվածության աստիճանը բազմազան է: Բնակչության ջրամատակարարման ջրապահանջը կազմում է 250հազ.մ³/օր, հեռանկարում՝ 300.0 հազ.մ³/օր: Գոյություն ունեցող ՕԿՁ-ի ծավալը (400մ³) չի բավարարում բնակչության ջրամատակարարման պահանջները, ուստի նախատեսվում է 2 նոր ՕԿՁ-ի կառուցում: Բնակավայրը կոյուղացված չէ, բացակայում է նաև հեղեղատար կոյուղին: Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է 280 մ³/օր ծավալով ջրահեռացման կոյուղատար համակարգի կառուցում:

Հետազոտվող տարածքի բուսական աշխարհին բնորոշ է մարգագետնային, մարգագետնա-տափառանային, անտառային բուսականությունը՝ կաղնի արևելյանը, կեչի թափուտ, լրենի սրտած, արոսենի սովորական, տարախոտա-հացազգային, ենթալպյան հացազգիներ, բազմամյա խոտարույսեր և այլ բուսատեսակներ: Կենդանական աշխարհին բնորոշ են՝ գայլ, ոզնի, աղվես, նապաստակ, թռչնատեսակներից՝ կեռ, արտույտ, կեռնեխ, կաչաղակ, կաքավ և այլն: Տարածում հնարավոր է հանդիպել նաև կառմիր գրքում գրանցված



անողնաշարավոր կենդանատեսակներ և թռչնատեսակներ: Բնակավայրի վարչական սահմաններում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Համաձայն հաշվետվության գյուղի գերեզմանատունը (1.49 հա) շրջապատված է տնամերծ հողամասերով: Գերեզմանատան հարավային փոքր հատվածն ունի պատմության և մշակույթի կարգավիճակ: Հեռանկարում նախատեսվում է հատկացնել 0,48 հա տարածք (սանիտարապաշտպանիչ գոտու պահպանմամբ) նոր գերեզմանոց կառուցելու համար: Աղբը, ինչպես այժմ, այնպես էլ հեռանկարում տեղափոխվելու է Ապարան համայնքի կենտրոնական աղբավայր:

Գյուղի բնակչությունը ներկա վիճակում կազմում է 812 մարդ, հեռանկարում՝ 1100 մարդ:

Համաձայն հաշվետվության գյուղի հեռանկարային զարգացման համար նախատեսվող ընդհանուր մակերեսը կազմելու է 1.8 կմ²: Ուսումնասիրվող տարածքում տեխնածին երևոյթները բացակայում են: Բնակավայրը գրաղեցնում է 1740.24 հա, որի հիմնական մասը՝ 75%-ը գյուղատնտեսական նշանակության հողատեսքերն են: Հեռանկարային զարգացման շրջանակներում նախատեսվում է 9.69 հա հողատեսքերի՝ նպատակային և գործառնական նշանակության փոփոխություններ: Նախատեսվող հողատեսքային փոփոխությունների արդյունքում հողային ռեսուրսները՝ ներկա վիճակում և հեռանկարում ունենալու են հետևյալ բաշխվածությունը.

- բնակավայրի հողեր՝ 113.76հա, հեռանկարում՝ 120.61հա, որից բնակելի կառուցապատման՝ 92.35 հա, հեռանկարում՝ 92.16հա, հասարակական կառուցապատման՝ 1.43 հա, հեռանկարում՝ 5.42 հա, ընդհանուր օգտագործման՝ 13.89հա, հեռանկարում՝ 17.27 հա, այդ թվում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներ՝ 1.05 հա, այլ տարածքներ՝ 6.09 հա, հեռանկարում՝ 5.76 հա,

- գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 1309.91 հա, հեռանկարում կազմելու է 1305.70 հա, որից վարելահողը՝ 150.14 հա, հեռանկարում՝ 149.96 հա, արոտ՝ 1073.01 հա, հեռանկարում՝ 1070.07 հա, խոտհարք՝ 25.14հա, հեռանկարում՝ 24.66 հա, այլ հողատեսքեր՝ 61.62 հա, հեռանկարում՝ 61.01 հա,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 7.32 հա, հեռանկարում՝ 4.49 հա, որից գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ՝ 7.21 հա, հեռանկարում՝ 2.59 հա, արդյունաբերության՝ 0.11 հա, հեռանկարում՝ 1.90 հա,

- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքի հողեր՝ 1.04հա, հեռանկարում՝ 1.57 հա, այդ թվում՝ էներգետիկայի՝ 0.01 հա, հեռանկարում չի փոփոխվելու, տրանսպորտի՝ 0.75 հա, հեռանկարում չի փոփոխվելու, կոմունալ ենթակառուցվածքի՝ 0.28 հա, հեռանկարում՝ 0.81 հա,

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 6.58.հա, հեռանկարում՝ 6.24 հա, որից հանգստի համար նախատեսված՝ 0.47 հա, հեռանկարում՝ 0.13 հա, պատմության և մշակույթի՝ 6.11 հա, հեռանկարում չի փոփոխվելու,

- անտառային հողեր՝ 301.17 հա, հեռանկարում՝ չի փոփոխվելու,

- ջրային հողեր՝ 0.46հա, հեռանկարում՝ չի փոփոխվելու:

Հողատեսքերի փոփոխությունների արդյունքում գյուղատնտեսական հողերից օտարվելու է 3,73հա: Ավելանալու են հասարակական կառուցապատման, ընդհանուր



օգտագործման կոմունալ ենթակառուցածքների և այլ հողատեսքերը: Անտառային, ջրային, հատուկ պահպանվող՝ պատմության և մշակութի հողատեսքերը չեն փոփոխվելու: Համաձայն ռազմավարական գնահատման հաշվետվության, հեռանկարում նախատեսվում է ստեղծել 1.05 հա մակերեսով ընդհանուր օգտագործման կանաչ տարածք, որի արդյունքում բնակչության մեկ շնչին հասնող կանաչ տարածքը կազմելու է 9.545 ք.մ: Նախատեսվում է նաև երթուղիների կառուցում՝ էկոտուրիզմի զարգացման նպատակով:

Հողատեսքերի փոփոխության արդյունքում նախատեսվում է.

- գյուղի հասարակական համակարգի՝ մշակութային կենտրոնի, մարզադահլիճի, տոնավաճառի, գյուղապետարանի գրասենյակների, կապի հանգույցի ձևավորում, երիտասարդության համար մարզական և առողջարարական համակարգի ստեղծում:

- Գյուղի հանրակրթական դպրոցի տարածքում՝ ժամանակակից պահանջներին համապատասխան մանկապարտեզի նոր շենքի, ներկայումս չգործող գյուղարտադրական տարածքում՝ արտադրական և գյուղարտադրական արտադրամասերի կառուցում:

- Գյուղի հյուսիս-արևելյան արվարձանում՝ գբոսաշրջային համալիրի, դեպի «Թուխ մանուկ» եկեղեցի՝ ճոպանուղու ներքին կայանի, «Թուխ մանուկ» եկեղեցու պատմամշակութային հոլշարձանի պահպանության գոտու սահմաններից դուրս՝ բացօթյա ամֆիթատրոնի, ճոպանուղու վերին կայանի, «Կարմիր վանք» կամ «Մխեթի վանք» եկեղեցական համալիրից արևմուտք՝ հանգստի կենտրոնի, Լուսագյուղի հիմնական մուտքի մասում՝ կոթողի կառուցում:

- Գյուղի ճանապարհային ցանցի բարեկարգում, ճանապարհային նոր հատվածների, հակահեղեղային համակարգի, կեղտաջրերի հեռացման (կոյուղի) համակարգի կառուցում, ելեկտրամատակարարման ցանցի արդիականացում, արևային մարտկոցների տեղադրում, գոյություն ունեցող օդային գծերի մասնակի տեղափոխում և այլն:

Համաձայն հաշվետվության մշակվել են բնակավայրի պատմության և մշակութի, ինչպես նաև բնության ժառանգության պահպանման, անվնաս օգտագործման միջոցառումները, կառուցապատման և սպասարկման ռեժիմները, էկոհամակարգի (լանդշաֆտ) պահպանության գոտիները: Կազմվել է նաև համայնքի գոտուրման նախագիծը, սահմանելով բնակավայրի առանձին գոտիների բաժանումը՝ հողօգտագործման և կառուցապատման թույլատրելի օգտագործման նորմերին և չափորոշիչներին համապատասխան: Հաշվետվությունում ներառված են այլնտրանքային տարբերակի (գրոյական) վերլուծությունը, ներկայացված տարբերակի հիմնավորումը:

Համաձայն հաշվետվության գլխավոր հատակագծի շրջանակներում նախատեսվող գործունեությունների իրականացումը շրջակա միջավայրի վրա ունենալու են ազդեցության ցածր ռիսկեր: Կատարվող գործողությունների ենթակա տարածքում ազդեցությունները կապված են լինելու շինարարության ընթացքում՝ մթնոլորտային օդի, մակերևութային և ստորգետնյա ջրային ռեսուրսների, հողային ռեսուրսների հավանական աղտոտման, թափոնների կառավարման հետ:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման,



թափոնների կառավարման, լանդշաֆտի պահպանման ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր և մոնիթորինգ, մասնավորապես.

- ճանապարհային ցանցի բարելավում, ջեռուցման համակարգի արդիականացում, տրանսպորտային միջոցների բարելավում՝ ավտոտրանսպորտից օդային ավազան արտանետումների կրճատման նպատակով,

- գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավում, բնակչության խմելու և կենցաղային կարիքների համար ջրի որակի բարելավում, հոսակորուստների կրճատում, ժամանակակից ոռոգման համակարգի ներդրում,

- գետերի ափամերձ տարածքներում սպասարկման օբյեկտների կառուցման բացառում՝ ջրային ռեսուրսները աղտոտումից պահպանելու նպատակով,

- տեղային կենսաբանական մաքրման կայանի տեղադրում՝ կեղտաջրերի կենսաբանական մաքրման, հողային և ջրային ռեսուրսների մեջ կեղտաջրերի արտահոսքի հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով,

- գործողությունների կատարման արդյունքում առաջացող հողի բերրի շերտի պահպանում և նպատակային օգտագործում, << կենդանիների և բույսերի Կարմիր գրքերում գրանցված տեսակների հայտնաբերման վայրերում՝ տուրիզմի բացառում,

- հակաէրոգիոն, հակահեղեղային, ափապաշտպան գործողությունների կատարում, բուսածածկի վերականգնում՝ հողային ծածկույթի պահպանման նպատակով,

- աշխատողների աշխատանքի անվտանգության ապահովում, արտակարգ իրավիճակների դեպքում բնակչության անվտանգության ապահովում, պաշտպանական կառուցների շինարարություն, պահպանում, բնակչության պատսպարում և այլն:

Պատճառաբանական եզրահանգումներ. համաձայն ռազմավարական գնահատման հաշվետվության, Լուսագյուղի հեռանկարային զարգացումը տարածքի բնական լանդշաֆտի, կենսաբազմազանության և շրջակա միջավայրի բաղադրիչների վրա ունենալու է նվազագույն ազդեցություն, կրելով տեղայնացված և ժամանակավոր բնույթ: Նախատեսվող շինարարական աշխատանքները նոր տարածքներում, անտառածածկ վայրերում և գետերի ափամերձ հատվածներում չեն նախատեսվում: Հիմնադրութային փաստաթղթով նախատեսված գործողությունների իրականացումը նպաստելու է բնակավայրի կայուն զարգացմանը, ճանապարհատրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների, կառուցների արդիականացմանն ու կատարելագործմանը, պատմամշակութային ժառանգության պահպանմանը, շրջակա միջավայրի, բնակչության սոցիալ-տնտեսական, կենցաղային, սանիտարահիգիենիկ և առողջապահական պայմանների բարելավմանը՝ Լուսագյուղը դարձնելով բնակվելու, աշխատանքի և հանգստի համար ավելի գրավիչ, մաքուր և առողջ միջավայրով բնակավայր:

Ռազմավարական գնահատման հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության և մշակույթի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունները, որոնց կարծիքների հիման վրա հաշվետվությունը լրամշակվել է: Օրենսդրությամբ անհմանված



կարգով Լուսագյուղում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել:

Փորձաքննական պահանջներ

1. Հիմնադրութային փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել մշտադիտարկման (մոնիթորինգ) կատարումը, հետևախագծային վերլուծության ծրագրի կազմումը:

2. Հիմնադրութային փաստաթղթի շրջանակում նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

3. Բնակավայրի հեռանկարային կառուցապատման ընթացքում անհրաժեշտ է պահպանել նախագծով նախատեսված հեռանկարային լուծումները՝ բացառելով անտառային, պատմական և մշակութային հողերի նպատակային նշանակության փոփոխությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Արմենիան Ֆյուչ» ԲՀ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Լուսագյուղ գյուղի գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնաօպերատ



Ժ. Նորիշանյան